2.1.4. Վաղաժամկետ լուծել պայմանագիրը ,եթե ենթավարձակալն էականորեն վաթարացրել է Օբյեկտի մա վիճակը,սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով,չափով և ժամկետներում չի վճար. վարձավճարը :
2.1.5. Ցանկացած ժամանակ լուծել ենթավարձակալության պայմանագիրը՝ 3 (երեք) ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով ենթավարձակալին՝

2.2. ԵՆԹԱՎԱՐՁԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1. Թերություններ հայտնաբերելիս ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼԻ պահանջի դեպքում անհատույց վերացնել «ՕԲՅԵԿՏ»-ի մասի թերությունները կամ իջեցնել վարձավճարը կամ հատուցել թերությունները վերացնելու համար կատարված ծախսերը:
2.2.2. Ենթավարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1. կետում նշված Օբյեկտի մասի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,
2.2.3. Ենթավարձակալած տարածքում ապահովել էլեկտրոէներգիայի և ջրամատակարարման անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում,վերացնել դրանք ոչ ուշ քան 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:
2.2.4. Ոչ ուշ քան 3 (երեք) ամիս առաջ, ենթավարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտի մասն ազատելու անհրաժեշտության մասին:

2.3. ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՆ իրավունք ունի՝

2.3.1. «ՕԲՅԵԿՏ»-ի մասի օգտագործման ժամանակ ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝
2.3.1.1. ԵՆԹԱՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել անհատույց վերացնելու «ՕԲՅԵԿՏ»-ի մասի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցել «ՕԲՅԵԿՏ»-ի մասի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.
2.3.2. եթե ենթավարձատուն ենթավարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Օբյեկտի մաս ,պահանջել հանձնել համապատասխան Օբյեկտի մաս կամ հրաժարվել հանձնված Օբյեկտի մասից ,իսկ եթե Օբյեկտի մասի համար վճարվել է ,ապա պահանջել վերադարձնել վճարված գումարը:
2.3.3..ենթավարձատուից պահանջել ՝ իրեն տրամադրել օբյեկտի մասին վերաբերող փաստաթղթերը
2.3.4.ենթավարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել ենթավարձակալության պայմանագիրը՝3 (երեք) ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով ենթավարձատուին:

2.4. ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼԸ պարտավոր է՝

2.4.1. ժամանակին վճարել «ՕԲՅԵԿՏ»-ի մասի օգտագործելու համար սույն պայմանագրի 3 կետում նախատեսված վճարը (վարձավճարը).
2.4.2. «ՕԲՅԵԿՏ»-ի մասը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել «ՕԲՅԵԿՏ»-ի պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.
2.4.3.Պայմանագիրը դադարելու դեպքում ԵՆԹԱՎԱՐՁԱՏՈՒԻՆ վերադարձնել «ՕԲՅԵԿՏ»-ի մասը կողմերի կողմից կազմված ընդունման-հանձնման ակտով ստացած վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը, 1 (մեկ) օրվա ընթացքում:
2.4.4. «ՕԲՅԵԿՏ»-ի մասն օգտագործել տարածքի նպատակային նշանակությանը համապատասխան:
2.4.5.Ապահովել ենթավարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի մաս՝դրա զննման և ստուգման համար:
2.4.6.Ապահովել Օբյեկտի մասի ինժեներական ցանցերի ,հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

2.5.«ՕԲՅԵԿՏ»-ի մասը ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼԻՆ տրամադրվել է 01.01.2013 թվականից, սույն պայմանագրի պայմաններին և «ՕԲՅԵԿՏ»-ի մասի նշանակությանը համապատասխան վիճակում, երկկողմանի կազմված ընդունման-հանձնման ակտով:

2.6. Ենթավարձակալության հանձնված «ՕԲՅԵԿՏ»-ի մասի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:

3.ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Վարձավճարի չափը ամսական կազմում է՝ 17.000 (տասնյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ , որը վճարվելու է յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ քան մինչև հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը : Վարձավճարը ներառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկային պարտավորությունները
3.2.ենթավարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները ենթավարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալուց հետո, եթե նախապես վճարումներ չի կատարվել:
3.3. Ցանկացած ժամանակ կողմերը երկկողմանի համաձայնությամբ կարող են վերանայել վարձավճարը:
3.4. ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼԸ պարտավորվում է վճարել իր կողմից օգտագործված բոլոր կոմունալ /էլեկտրոէներգիայի, տաք և սառը ջրի, աղբի,գազի և հեռախոսների/ վարձավճարները: